

Ուսանողի ձեռնարկ

11

Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը

Բացահայտել հիմնական քայլերն ու մեթոդներն
Աստվածաշնչի ուսումնասիրության համար



Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը

Բացահայտել հիմնական քայլերն ու մեթոդներն
Աստվածաշնչի ուսումնասիրության համար

Յեղիսակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում



Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը

Բացահայտել հիմնական քայլերն ու մեթոդներն

Աստվածաշնչի ուսումնասիրության համար

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում

Յեդինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հոչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, *How to Study the Bible*, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Վերջին անգամ վերանայվել է. 12-2018

Բովանդակություն

Գլուխ 1. Սկսել Աստվածաշնչի ուսումնասիրության հիմունքներով.....	4
Ա. Ինչո՞ւ է կարևոր՝ ուսումնասիրել Աստվածաշունչը:.....	4
Բ. Նախապատրաստվել Աստվածաշնչի ուսումնասիրության համար:.....	8
Գլուխ 2. Աստվածաշնչի ուսումնասիրությունը կիրառելի դարձնել իմ կյանքում	14
Ա. Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլեր:	14
Բ. Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկեր:	19
Գլուխ 3. Աստվածաշնչի անձնական և խմբային ուսումնասիրություն	21
Ա. Անձնական պաշտամունք	21
Բ. Աստվածաշնչի խմբային ուսումնասիրություն և ընտանեկան պաշտամունք:	23
Գլուխ 4. Աստվածաշնչի ուսումնասիրության մեթոդներ	26
Ա. ԱՀԱԿ մեթոդ.....	27
Բ. Համարներ անգիր անել:.....	29
Գ. Մտածել Աստծո Խոսքի շուրջ:	35
Բ Կորնթացիներին 8:11	40
Անձնական կիրառության լավ նպատակի նշանները:.....	41

Գլուխ 1.

Մկսել Աստվածաշնչի ուսումնասիրության հիմունքներով

Երբ խոսում ենք «Աստվածաշնչի ուսումնասիրության» մասին, մենք «ուսումնասիրել» բառն օգտագործում ենք ընդհանրական ձևով: Այդ բառն ասելով՝ նկատի ունենք ցանկացած ժամանակը, երբ կարդում ենք, անգիր անում, մտածում կամ հետազոտություն անում Աստվածաշնչի որևէ հատվածի վերաբերյալ: Մա կարող է նշանակել՝ Աստվածաշնչի վրա օգտագործել մեկ բոլոր կամ հինգ ժամ:

Ա. Ինչո՞ւ է կարևոր՝ ուսումնասիրել Աստվածաշունչը:

Քրիստոնեական հաջողակ կյանք ապրելու գաղտնիքներից մեկն անձնական սովորություններ զարգացնելն է, որոնք մեզ ավելի կմոտեցնեն Աստծուն: Նորադարձ քրիստոնյաների մեծ մասը, մինչև ճշմարիտ քրիստոնյա դառնալը, ամեն օր Աստվածաշունչ չեն կարդացել: Այնպես որ, նրանց համար սա մի նոր զբաղվածություն է դառնում:

Եթե դու ճշմարիտ քրիստոնյա ես, կամ մտածում ես դառնալ այդպիսին, քեզ համար կարևոր է՝ սկսել ուսումնասիրել Աստվածաշունչը:

1. Մի քանի պատճառներ, թե ինչու են մարդիկ ուսումնասիրում Աստվածաշունչը:

Ահա մի քանի պատճառներ, որ նորադարձ քրիստոնյաները տվել են՝ ի պատասխան այդ հարցին.

- ա. Գտնել իմ հարցերի պատասխանները:
- բ. Աստծուն ավելի լավ ճանաչել:
- գ. Քանի որ հետաքրքիր է իմանալ, թե ինչ է ասում Աստվածաշունչը:
- դ. Իմանալ, թե ինչ է Աստված ուզում, որ ես կյանքում անեմ:
- ե. Ոգեշնչման և վայելելու համար (կան մարդիկ, ովքեր սիրում են կարդալ):
- զ. Սովորել, թե ինչպես ավելի լավ քրիստոնյա դառնալ:

2. Ինչո՞ւ ես պետք է ուսումնասիրեմ Աստվածաշունչը:

Որո՞նք են պատճառները, որ դու պետք է ուսումնասիրես Աստվածաշունչը: Մեկ բույս հատկացրո՛ւ և թվարկի՛ր 2 կամ 3 հիմնական պատճառներ, թե ինչու ես դու ուզում ուսումնասիրել Աստվածաշունչը:

ա. _____

բ. _____

գ. _____

3. Որո՞նք են Աստվածաշունչն ուսումնասիրելու օգուտները:

Աստվածաշնչի ուսումնասիրությունը կարող է մեծ փոփոխություն բերել քո առօրյա կյանքում: Ահա մի քանի համարներ, որոնք թվարկում են Աստվածաշնչի ուսումնասիրության մի քանի օգուտներ:

Սաղմոս 119:9,11,105

Հովհաննես 17:17

Հովհաննես 16:12-15

Բ Տիմոթեոս 3:16,17

Շատ անգամ այս օգուտները միանգամից չեն գալիս: Բայց և այնպես, եթե Աստվածաշնչի ուսումնասիրությունը դարձնես քո առօրյայի անբաժան մասը, դու կսկսես տեսնել, թե ինչպես է այն օգնում քեզ: Մեկ այլ ձև էլ, թե ինչպես կարող ես գործնական պատկերացում կազմել Աստվածաշնչի ուսումնասիրության օգուտների վերաբերյալ, ուրիշ քրիստոնյաների հետ խոսելն է և հարցնելը, թե ինչպես է Աստվածաշնչի ուսումնասիրությունն օգնում նրանց:

Քրիստոնեական աճի պատկեր

7-րդ էջում դու կարող ես տեսնել «Քրիստոնեական աճի պատկեր» աղյուսակը: Նախքան Աստվածաշնչի ուսումնասիրության տարբեր մեթոդներին անցնելը, անհրաժեշտ է ընդհանրական հայացք գցել, թե ինչ է Աստված փափագում մեզ համար, որն է՝ անձնական աճ: Նույնիսկ Հիսուսն աճեց, և մենք պետք է հետևենք Նրա օրինակին:

Ղուկաս 2:52.

«Եվ Հիսուսը զարգանում էր իմաստությամբ ու հասակով՝ շնորհ գտնելով Աստծո և մարդկանց առջև»:

Ահա այդ աղյուսակի համառոտ բացատրությունը: Քո ուսուցիչը սա կքննարկի դասարանում: Այնպես որ, եթե դու հարցեր ունենաս սրա վերաբերյալ, բարձրացրո՛ւ դրանք հաջորդ դասաժամին:

Ա. կետ. Որտե՞ղ ես դու այսօր:

Աղյուսակի ներքևում դու կտեսնես Ա. կետը. «Որտե՞ղ ես դու այսօր»: Հայացք գցելով քո այսօրվա կյանքին, և թե ինչ առաջընթաց ունես Հիսուսին հետևելու մեջ, ինչպե՞ս կգնահատես ինքդ քեզ: Ո՞ր ասպարեզներում ես դու հաջողություն ունենում: Ո՞ր ասպարեզներում դեռ աճելու տեղ ունես: Դու կարող ես մեկ բոլոր ժամանակ հատկացնել և թվարկել մի քանի մարտահրավերներ, որոնց դու հանդիպում ես քո կյանքի ներկա օրերում:

Բ. կետ. Որտե՞ղ է Աստված ուզում, որ դու լինես:

Բ. կետը ներկայացնում է՝ «Որտե՞ղ է Աստված ուզում, որ դու լինես»: Քո կյանքին անդրադառնալով՝ ինչպե՞ս ինքդ քեզ կնկարագրեիր, եթե ամբողջությամբ լինեիր Աստծո ուզածի պես:

Կարծում եմ՝ մեծ տարբերություն կա Ա. կետի տակ և Բ. կետի տակ քո գրածների միջև: Ուրեմն, ինչպե՞ս կարող ես այսօրվա քո գտնված տեղից հասնել Աստծո ուզած տեղը: Դու չես կարող այնտեղ հասնել մի հրաշագործ ակնթարթում: Դա ժամանակ կպահանջի, դա ընթացք է: Եվ Աստված կօգնի քեզ:

Աղյուսակի Գ., Դ. և Ե. կետերը ներկայացնում են ընդհանուր պատկերն այն քայլերի, որոնց կատարման կարիքը կա՝ Աստծո ուզած անձնավորությունը դառնալու համար: Արագ անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

Գ. կետ. Երկարաժամկետ նպատակներ:

Գ. կետի տակ երեք երկարաժամկետ նպատակ է թվարկված, որոնք նկարագրում են երեք խոշոր ասպարեզներ, որոնցում Աստված ուզում է, որ դու աճ ունենաս: Իհա՛րկե, դու կարող ես ցանկության դեպքում ուրիշ երկարաժամկետ նպատակներ նույնպես ավելացնել, սակայն լավ սկզբի համար սա բավական է:

1. Աճի՛ր՝ Աստծուն ավելի մոտ լինելու համար (ապրի՛ր քրիստոսակերպ կյանքով):
2. Օգնի՛ր մյուսներին (քրիստոնեական ծառայություն):
3. Հաղթահարի՛ր քո կյանքին տիրող խնդիրները:

Քրիստոնեական աճի պատկեր

Գ. Երկարաժամկետ նպատակներ:

1. Աճի՛ր՝ Աստծուն ավելի մոտ լինելու համար (ապրի՛ր քրիստոնական կյանքով):
2. Օգնի՛ր մյուսներին (քրիստոնեական ծառայություն):
3. Հաղթահարի՛ր քո կյանքին տիրող խնդիրները:



Բ. Որտե՞ղ է Աստված ուզում, որ դու լինես:

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

Գ. Միջոցներ, որոնք կարող ես օգտագործել անելու ժամանակ:

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____
7. _____

Ե. Առօրյա իրավիճակներ:

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____
7. _____



1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

Ա. Որտե՞ղ ես դու պատրաստ:

Այս աղյուսակի նպատակն է՝ Աստվածաշնչի ուսումնասիրությունը դարձնել քրիստոնյայի ամբողջական կյանք ապրելու հիմքը: Աստվածաշնչի ուսումնասիրությունը (լինի անձնական կամ խմբային) միջոց է՝ օգնելու քեզ, որպեսզի աճես և ավելի մոտենաս Աստծուն:

Դ. կետ. Միջոցներ, որոնք կարող են օգտագործել աճելու ժամանակ:

Դ. կետն աղյուսակում տեղ է թողնում՝ թվարկելու համար այն միջոցները, որոնք մենք կարող ենք օգտագործել (որոնք Աստված ուզում է, որ մենք օգտագործենք), որպեսզի ամենօրյա առաջընթաց ունենանք նշված նպատակներին հասնելու համար: Եթե դու դժվարանաս կողմնորոշվել, թե ինչ գրես այդտեղ, ապա կարող ես խոսել ուրիշ քրիստոնյաների հետ և իմանալ նրանց կարծիքը: Ի՞նչ է Աստված օգտագործել նրանց աճեցնելու համար:

Այդ միջոցներից մեկը, որի վրա այս դասընթացը կենտրոնանալու է, Աստվածաշնչի ուսումնասիրությունն է: Սա մի միջոց է, որն Աստված ուզում է օգտագործել, որպեսզի օգնի քեզ աճելու համար: Մեկ այլ միջոց, որն Աստված ուզում է օգտագործել քո կյանքում, քո առաջնորդներն են, հատկապես՝ հոգևոր առաջնորդները:

Ե. կետ. Առօրյա իրավիճակներ:

Ե. կետն աղյուսակում տեղ է թողնում, որպեսզի թվարկես առօրյա իրավիճակներ, որոնց դու հանդիպում ես ներկայումս: Աստված ուզում է օգտագործել ամենօրյա կյանքի այդ իրավիճակները, որպեսզի դու սովորես դրանց արձագանքել այնպես, ինչպես Նա է ուզում: Այդ իրավիճակներից յուրաքանչյուրը հնարավորություն է տալիս՝ կիրառելու այն, ինչ դու սովորել ես Աստվածաշնչից: Այս ձևով դու կարող ես ավելի ու ավելի աճելով դառնալ Աստծո ուզած անձնավորությունը:

Այս դասընթացին մենք նորից կվերադառնանք աղյուսակին՝ ներկայացնելու այն մեծ պատկերը, թե ինչպես Աստվածաշնչի ամենօրյա ուսումնասիրությունը կարող է քեզ օգնել՝ դառնալ Աստծո ուզած անձնավորությունը. հասուն, ազատության մեջ ապրող և Աստծո կամքը կատարող:

Բ. Նախապատրաստվել Աստվածաշնչի ուսումնասիրության համար:

Պատճառներից մեկը, թե ինչու որոշ մարդիկ չեն օգտվում Աստվածաշնչի իրենց ուսումնասիրությունից, այն է, որ նրանք պատշաճ կերպով չեն նախապատրաստվում: Ինչպե՞ս կարող եմ ճիշտ ծրագրեր կազմել:

1. Ե՞րբ ես պետք է ուսումնասիրեմ Աստվածաշունչը:

Քո օրվա ամենակարևոր անելիքը ո՞րն է: Աստվածաշնչի ուսումնասիրության համար ժամանակ գտնելը պետք է դառնա քո առօրյա գործունեության

առաջնահերթություններից մեկը: Վստահ եմ, որ դու ուտելու համար օրվա մեջ ժամանակ գտնում ես: Եթե «մոռանաս» ու չուտես, մի քանի ժամ անց քո մարմինը «բարձրաձայն կհիշեցնի» քեզ այդ մասին:

Սա կրոնավորության կոչ չէ, որ դու մեղքի զգացողությունից դրդված՝ ամեն օր կարդաս քո Աստվածաշունչը: Եթե ինչ-որ մեկին սիրում ես, ապա նրա հետ խոսելու առիթը բաց չես թողնի: Աստվածաշնչի ընթերցանությունը կարևոր ձևերից մեկն է՝ հնարավորություն տալ Աստծուն՝ խոսելու քեզ հետ:

Ցավոք, որոշ նորադարձ քրիստոնյաներ նորից հետ են գնում իրենց մեղսալից ապրելակերպին: Դրանք, հիմնականում, այն մարդիկ են, ովքեր թողնում են Աստվածաշնչի իրենց ամենօրյա ուսումնասիրությունը, ինչպես նաև՝ ամենօրյա աղոթքի կյանքը:

ա. Ուսումնասիրի՛ր Աստվածաշունչն ամեն օր:

Հնարավոր է՝ ամեն օր Աստվածաշունչ կարդալը քո առօրյայի ամենաոգևորիչ մասը չլինի: Սակայն ամեն օր հոգևոր սնունդ ընդունելը ճիշտ նույնքան կարևոր է, ինչքան նյութական սնունդը քո ֆիզիկական առողջության պահպանման համար:

Փորձի՛ր հարմար ժամանակ գտնել (եթե հնարավոր է՝ միշտ օրվա նույն ժամը) Աստվածաշնչի ուսումնասիրության համար: Նույնիսկ եթե դու օրվա մեջ ընդամենը հինգ րոպե կարող ես տրամադրել դրան, ԱՐԱ՝ ԴԱ:

բ. Ընտրի՛ր այն ժամանակը, երբ դու առույգ ես:

Որոշ մարդկանց համար իրենց լավագույն ժամանակն առավոտն է: Մյուսները շատ ուշ են սկսում իրենց առավոտը, նրանք «գիշերային» մարդիկ են: Գիշերով ավելի արթուն են: Աստծո համար միևնույն է, թե երբ ես դու Աստվածաշունչ կարդում՝ առավոտյա՞ն, ցերե՞կը, թե՞ երեկոյան, կարևորը, որ որակով ժամանակ անցկացնես Իր հետ: Հեռո՛ւ մնա այն տեղերից (օրինակ՝ քո անկողնուց), որտեղ դու, ամենայն հավանականությամբ, կքնես:

գ. Աշխատի՛ր կիրակի օրերն ավելի շատ ժամանակ տրամադրել:

Հիշի՛ր, որ կիրակին Տիրոջ օրն է: Մենք հեշտությամբ կարող ենք մեր կիրակին այնպես լցնել ամեն տեսակի հաճելի զբաղմունքներով ու միջոցառումներով, որ անգամ չմտածենք էլ Տիրոջ մասին, բացի եկեղեցում անցկացրած մի կարճ ժամանակից: Ծրագրի՛ր՝ լրացուցիչ ժամանակ տրամադրել Աստվածաշնչի ընթերցանությանը: Մեկ այլ հնարավորություն է՝ մտերմին, թեկուզ մեկին, ով ձերանոցում է, այցելելը և նրա համար Աստվածաշունչ կարդալը:

դ. Կիսվի՛ր ինչ-որ մեկի հետ նրանով, ինչ սովորեցիր:

Հանդիպի՛ր քո մտերիմներից մեկի հետ շաբաթը մեկ կամ երկու անգամ: Դարձրո՛ւ դա քո շաբաթվա գործունեության մի մասը: Կիսվի՛ր այն բաներով, որոնցով դու սովորել ես Աստվածաշնչի՝ քո անձնական ուսումնասիրության ժամանակ, և պատմի՛ր, թե ինչպես ես դրանք կիրառել քո կյանքում:

2. Ինչպե՞ս պետք է ուսումնասիրեմ Աստվածաշունչը:

Սովորել, թե ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը, շատ նորադարձ քրիստոնյաների համար լուրջ մարտահրավեր է: Անակնկալի չգաս, եթե որոշ դժվարությունների հանդիպես, երբ փորձես Աստվածաշնչի ուսումնասիրությունը դարձնել քո կյանքի օգտակար մասը: Ինքդ քեզ շարունակ ասա՛, որ Աստվածաշնչի ուսումնասիրությունը շատ կարևոր է քո հոգևոր աճի համար, և որ Աստված կօգնի քեզ:

ա. Միտքդ բա՛ց պահիր:

Նորադարձ քրիստոնյաների վերաբերմունքն Աստվածաշնչի ուսումնասիրության կամ Աստծուն լսելու վերաբերյալ երբեմն հիմնված է լինում իրենց անցյալի կրոնական փորձառության վրա, որոնք կարող են նրանց շփոթեցնել: Անկախ քո անցյալի փորձառությունից՝ Աստված ուզում է, որ դու հասկանաս, թե ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը և ինչպես սովորել Իրենից: «Աստվա՛ծ իմ, ի՞նչ ես ուզում, որ ես այսօր սովորեմ: Աստվա՛ծ իմ, իմ սիրտը բաց է Քո առջև: Սովորեցրո՛ւ ինձ»:

Ամեն օր մոտեցի՛ր Աստվածաշնչին այն ակնկալիքով, որ Աստված կխոսի քեզ հետ: Պատրաստակա՛մ եղիր սովորելու և բա՛ց եղիր Սուրբ Հոգու ծառայության համար: Թո՛ւ ւյլ տուր Նրան՝ առաջնորդել քեզ ողջ ճշմարտության մեջ:

Հովհաննես 16:13.

«Եվ ինչ որ խնդրեք Իմ անունով, Ես պիտի անեմ դա, որ Հայրը փառավորվի Որդու մեջ»:

բ. Աղոթքով:

Աստվածաշնչի քո ուսումնասիրությունը շատ ավելի արդյունավետ կարող է լինել, եթե դու սկսես աղոթքով և աղոթքը դարձնես Աստվածաշնչի ուսումնասիրության կարևոր մասը: Աստվածաշնչից համարներ կարդալիս աղոթի՛ր և խնդրի՛ր Աստծուն, որպեսզի օգնի քեզ՝ քո սովորածը կիրառելու համար:

գ. Հնազանդվելու վերաբերմունքով:

Եթե Աստվածաշնչի ուսումնասիրությունը քո կյանքում փոփոխություն չի առաջացնում, ուրեմն դու բաց ես թողել այն, ինչ Աստված ունի քեզ համար: Եթե ուզում ես, որ Աստված խոսի քեզ հետ, ուրեմն կարդա՛ ն ուսումնասիրի՛ր Նրա Խոսքը՝ Աստվածաշունչը: Ակնկալի՛ր, որ Աստված քեզ խորաթափանցություն կտա, որը կօգնի, որ հաղթահարես քո կյանքում հանդիպող մարտահրավերները:

Եթե ուզում ես, որ Աստվածաշնչի ուսումնասիրությունն իրոք օգուտ տա քեզ, ապա կարևոր է, որ դու դրան մոտենաս հնազանդվելու պատրաստ վերաբերմունքով: Հնարավոր է, որ քեզ մոտ միշտ լավ չստացվի, բայց արդյոք դու ուզո՞ւմ ես հնազանդվել: Դու ուզո՞ւմ ես աճել: Դու ուզո՞ւմ ես փոխվել: Դու ուզո՞ւմ ես դառնալ այնպիսի անձնավորություն, որպիսին Աստված է ուզում, որ լինես: Դու ունե՞ս աճելու փափագ:

Աստված պատրաստակամ սիրտ է փնտրում: Եթե ուզում ես հնազանդվել, Նա տեսնում է դա, եթե անգամ քո շրջապատում ուրիշ ոչ ոք դա չի տեսնում:

3. Ի՞նչ է ինձ պետք Աստվածաշունչ ուսումնասիրելու համար:

Երկու շատ կարևոր բան կա, որոնց կարիքը դու ունես, որպեսզի Աստվածաշնչի քո ուսումնասիրությունը հաջողված լինի:

ա. Աստվածաշունչ:

Փորձի՛ր գտնել տարբեր թարգմանություններ և գործածի՛ր դրանք, որպեսզի օգնես քեզ՝ Աստվածաշունչն ավելի լավ հասկանալու համար: Համոզվի՛ր, որ քո ընտրած թարգմանությունը քեզ համար առավել հասկանալի է: Նաև կարող է օգտակար լինել նույն հատվածը տարբեր թարգմանություններով կարդալը:

Որոշ քրիստոնյաներ, հնարավոր է, քեզ խորհուրդ տան՝ չօգտագործել Աստվածաշնչի այս կամ այն թարգմանությունը: Նրանք, միգուցե, փորձեն քեզ ուղղորդել, որպեսզի օգտագործես միայն իրենց սիրելի թարգմանությունը: Չգո՛ւյշ եղիր նման խորհուրդներն ընդունելուց: Կոպիտ ասած՝ որոշ քրիստոնյաներ կարծրացած տեսակետ ունեն «ճիշտ» թարգմանության առումով:

Միայն այն հանգամանքը, որ Աստվածաշնչի տվյալ տարբերակը ինչ-որ մեկի «սիրելի» թարգմանությունն է, դեռ չի նշանակում, որ այն պետք է լինի նաև քո սիրելի թարգմանությունը: Մի պահ մտածի՛ր մարդկանց սիրելի կերակուրների մասին: Ոմանք գուցե սիրում են չինական ուտելիքը, իսկ դու՝ ոչ: Սա նորմալ է. դու, միևնույն է, կարող ես երկինք գնալ, նույնիսկ եթե չինական ուտելիք չես սիրում:

Կան համակարգչային ծրագրեր և ինտերնետային կայքեր, որտեղ հասանելի են Աստվածաշունչի տարբեր թարգմանություններ: Ահա երկու անվճար կայքեր.
<http://bible.gospelcom.net/bible> և <http://biblegateway.com>:

Ինչպես վերևում նշեցինք՝ համոզվի՛ր, որ քո իսկ ընտրած թարգմանությունը քեզ համար առավել հասկանալի է: Եվ լավագույն Աստվածաշունչն այն մեկն է, որը դու կիրառում ես քո ամենօրյա կյանքում:

բ. Պահի՛ր նոթատետր քո նշումների համար:

Դու շատ ավելին կսովորես ու կհիշես Աստվածաշունչի քո ուսումնասիրությունից, եթե նշումներ անես: Դասավորի՛ր դրանք և գրանցի՛ր նոթատետրում: Որոշ մարդիկ սա կարող են նմանեցնել օրագիր պահելուն: Գրի՛ առ քո կարդացած համարների հիմնական ուսուցումները: Գրի՛ առ քեզ հանդիպող անձնական խնդիրների պատասխանները: Ի՞նչ է ասում Աստված *քեզ* սովյալ համարում:

4. Աստվածաշունչի ուսումնասիրության այլ միջոցներ:

Ներքևում նշված են երեք այլ միջոցներ, որոնք դու կարող ես գործածել Աստվածաշունչի ուսումնասիրության համար: Դրանք հասանելի են երկու ձևով՝ որպես համակարգչային ծրագիր և որպես գիրք:

Աստվածաշունչի ուսումնասիրության համակարգչային ծրագրերը մեծ բազմազանություն են առաջարկում՝ սկսած պարզ համաբարբառից մինչև Աստվածաշունչի ուսումնասիրության մեկնաբանությունների նեղ մասնագիտացված գրադարաններ: Դու այս տարբերակների վերաբերյալ կարող ես քննարկումներ անցկացնել քո ուսուցչի կամ հովվի հետ՝ թե դրանցից ո՞րն ավելի օգտակար կարող է լինել քեզ համար: Աստվածաշունչի ուսումնասիրության միջոցների անվճար մի կայք էլ հետևյալն է. <http://biblegateway.com>:

Ահա Աստվածաշունչի ուսումնասիրության երեք ամենատարածված միջոցների համառոտ բացատրությունը. համաբարբառ, աստվածաշնչյան ատլաս և աստվածաշնչյան բառարան:

ա. Համաբարբառ:

Համաբարբառն աստվածաշնչյան բառերի մի ցուցակ է, որում նշվում են Աստվածաշնչում օգտագործված բառերի տեղերը: Եթե դու ցանկանաս գտնել, թե որտեղ և որքան անգամ է «սեր» բառն Աստվածաշնչում օգտագործվում, համաբարբառը քեզ այդ հարցում կօգնի:

Համաբարբառներ կարելի է գտնել Աստվածաշունչի տարբեր թարգմանությունների պարագայում՝ թե՛ համակարգչային, թե՛ գրքի ձևով: Որոշ Աստվածաշնչերի վերջում կա համառոտ համաբարբառ:

Համաբարբառների մեծ մասում նշվում է համարի հասցեն և դրա մի փոքր հատվածը, եթե այն գրքի ձևով է: Համակարգչային համաբարբառները սովորաբար ներկայացնում են համարն ամբողջությամբ և հնարավորություն ունեն ընդամենը մեկ հայումով բերել ամբողջ հատվածը, մինչև անգամ՝ ամբողջ գլուխը:

Սա օգտակար է, երբ դու, ընդհանուր առմամբ, գիտես, թե ինչ է ասում համարը, սակայն չգիտես, թե որտեղ է այն գտնվում Աստվածաշնչում:

Որոշ համաբարբառներ նաև նշում են քո փնտրած բառի հունարեն և եբրայերեն տարբերակները: Օրինակ, հայերեն «սեր» բառը թարգմանված է հունարեն երկու տարբեր բառերից: Հունարենում այդ բառերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ նշանակությունը, որը հայերեն թարգմանվելիս չի երևում: Նման համաբարբառները քեզ կօգնեն կողմնորոշվելու, թե ո՞ր համարում հունարեն ո՞ր բառն է օգտագործված:

բ. Աստվածաշնչյան ատլաս:

Աստվածաշնչում նշված շատ քաղաքներ ու երկրներ այսօր այլևս գոյություն չունեն և, հետևաբար, չեն կարող լինել ժամանակակից քարտեզների վրա: Աստվածաշնչյան ատլասում գետեղված են այն վայրերի քարտեզները, որոնց մասին նշված է Աստվածաշնչում: Այդ քարտեզները ցույց են տալիս քաղաքների և երկրների գտնվելու վայրերը ինչպես Հին Կտակարանի, այնպես էլ Նոր Կտակարանի տարբեր ժամանակահատվածներում:

Հիսուսի ճանապարհորդությունների մասին կարդալիս դու կարող ես դրանց հետևել Աստվածաշնչյան ատլասի քարտեզների վրա:

գ. Աստվածաշնչյան բառարան:

Աստվածաշնչյան բառարանը նման է սովորական բառարանի, սակայն նրանում տրված սահմանումներն ասում են այն մասին, թե ինչ են այդ բառերը նշանակել Աստվածաշնչյան ժամանակներում: Որոշ բառեր ներկայումս փոխել են իրենց իմաստները՝ համեմատած այն ժամանակների, երբ Աստվածաշունչն էր գրվում:

Գլուխ 2.

Աստվածաշնչի ուսումնասիրությունը կիրառելի դարձնել իմ կյանքում

Եթե ուզում ես դառնալ հաջողակ անձնավորություն՝ ինչպիսին Աստված է ուզում, որ լինես, ապա քեզ համար կարևոր է հասկանալ, թե ինչպես կարող ես Աստվածաշնչի ուսումնասիրությունը քո կյանքում կիրառելի դարձնել հենց այսօր, ոչ թե, օրինակ, սրանից հինգ տարի հետո: Եթե ուզում ես Աստվածաշնչի ուսումնասիրությունը կիրառելի լինի քո կյանքում, ուրեմն քո նպատակը պետք է լինի անձնական կիրառությունը:

Մենք Աստվածաշնչի ուսումնասիրություն չենք անում ընդամենը մեր գլխում լավ տեղեկություններ կուտակելու համար: Աստվածաշնչի ուսումնասիրությունը պետք է մեզ հանդերձավորի գործելու համար: Մենք կարիք ունենք Աստծո Խոսքը պահելու մեր սրտում և ասելու. «Ես ուզում եմ հնազանդվել Աստծուն: Ես ուզում եմ Աստծո ճշմարտությունն իմ կյանքում կիրառել այսօր»:

Ա. Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլեր:

Եթե ուզում ես Աստվածաշնչի ուսումնասիրությունը կիրառելի լինի քո կյանքում, պետք է հասկանաս երեք պարզ քայլերի գործընթացը:

Այս երեք քայլերն Աստվածաշնչի ուսումնասիրության սիրտն են: Այս երեք քայլերին պետք է հետևել՝ անկախ այն բանից, թե Աստվածաշնչի ուսումնասիրության որ մեթոդն ես կիրառում: Եթե դու Աստվածաշունչ ուսումնասիրելիս գործածես այս երեք քայլերը, ապա կարող ես վստահ լինել, որ կսովորես հաջողակ քրիստոնեական կյանք ապրել:

Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլեր:

1. **Իմացի՛ր փաստերը** (ի՞նչ է այն ասում): Քննի՛ր:
2. **Հասկացի՛ր իմաստը** (ի՞նչ է այն ասում): Մեկնաբանի՛ր:
3. **Կիրառի՛ր այն քո կյանքում** (Ինչպե՞ս կարող եմ սա կիրառել իմ առօրյա կյանքում): Անձնական կիրառություն:

Մի քանի պարզ նախագծեր են տրված Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերից յուրաքանչյուրից հետո: Կարիք չկա, որ դու ամեն անգամ Աստվածաշունչն ուսումնասիրելիս լրացնես դրանք:

Այս դասընթացի 3-րդ և 4-րդ գլուխներում քննարկվում են Աստվածաշնչի ուսումնասիրության տարբեր մեթոդներ և այն, թե ինչպես կարող ես այս երեք հիմնական քայլերը կիրառել Աստվածաշնչի ուսումնասիրության ժամանակ:

1. **Իմացի՛ր փաստերը** (ի՞նչ է այն ասում): Քննի՛ր:

Առակաց 23:23. «Ճշմարտությունն ծախու ա՛ն ու մի՛ ծախիր այն»: Աստվածաշնչի ուսումնասիրության առաջին քայլը փաստերը ճիշտ իմանալն է: Իմացի՛ր, թե ինչ է իրականում ասում տվյալ հատվածը: Իմացի՛ր, թե ինչ է Աստված ասել:

Փաստերն իմանալիս պետք է պատասխանես հետևյալ վեց հիմնական հարցերին.

1. **Ովքե՞ր** են ներգրավված:
2. **Ի՞նչ** է տեղի ունենում:
3. **Որտե՞ր** են դեպքերը տեղի ունենում:
4. **Ե՞րբ** են դրանք տեղի ունենում:
5. **Ինչո՞ւ** են դրանք տեղի ունենում:
6. **Ինչպե՞ս** են դրանք տեղի ունենում:

Նախագծեր.

1. Արագ կարդա՛ հատվածը և ընդհանուր պատկերացո՛ւմ կազմիր, թե ինչի մասին է այն:
2. Ստուգի՛ր համատեքստը (քո ուսումնասիրած հատվածից առաջ և հետո եկող համարներն ու պարբերությունները):

3. Նորից կարդա՛ նույն հատվածը մեկ ուրիշ թարգմանությունից: Նշի՛ր ցանկացած մեծ տարբերություն, որ դու կնկատես:
4. Գրի՛ առ, թե ինչ է այդ հատվածը հիմնականում սովորեցնում:
5. Նշի՛ր ցանկացած հարց կամ խնդիր, որը դու կունենաս տվյալ հատվածը կարդալուց հետո:
6. Նշի՛ր այն կարևոր կետերը, որոնց մասին տվյալ հատվածում խոսվում է:

2. Հասկացի՛ր իմաստը (ի՞նչ է այն ասում): Մեկնաբանի՛ր:

Առաջին քայլը՝ «Իմացի՛ր փաստերը», քեզ ուղիղ բերում է քայլ երկրորդին՝ «Հասկացի՛ր իմաստը»:

Այս քայլի նպատակը տվյալ հատվածի իմաստը պարզորոշ հասկանալն է: Շատ կարևոր է տվյալ հատվածի իմաստը հասկանալ այն մարդկանց տեսանկյունից, որոնց նկատմամբ ուղղված է եղել: Ինքդ քեզ պատկերացրո՛ւ նրանց վիճակում: Պարզի՛ր, թե ինչքանով այս հատվածը կապ ունի ուրիշ համարների հետ, որոնք խոսում են այդ նույն թեմայի մասին:

Այս քայլի նպատակն է, որ նաև պարզես, թե ինչ նշանակություն ունի տվյալ հատվածը քո կյանքի համար: Հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ինչքանո՞վ է այս հատվածը վերաբերում իմ առօրյա կյանքին»: Դու Մուրբ Հոգու կարիքն ունես յուրաքանչյուր համարի ամբողջական իմաստը հասկանալու համար:

Նախագծեր.

1. Իմացի՛ր յուրաքանչյուր բառի հստակ սահմանումը:
 - ա. Նայի՛ր Աստվածաշնչի այլ թարգմանություններ:
 - բ. Նայի՛ր տվյալ բառը հայերեն բառարանում:
 - գ. Նայի՛ր տվյալ բառն աստվածաշնչյան բառարանում:
2. Նշի՛ր այն բոլոր թեմաները, որոնց մասին տվյալ համարը խոսում է:
3. Նայի՛ր, թե ինչ կապ ունի այդ համարն Աստվածաշնչի տվյալ գլխի մյուս համարների հետ:
4. Գտի՛ր աստվածաշնչյան նաև ուրիշ համարներ, որոնք խոսում են միևնույն թեմայի շուրջ: Օգտագործի՛ր համաբարբառ, կամ Աստվածաշնչում եղած սյունակային հղումներ՝ քո գործը հեշտացնելու համար:
5. Անձնակա՛ն դարձրու այդ համարները:
 - ա. Գրի՛ր տվյալ համարը քո սեփական բառերով:
 - Գրի՛ր քո սեփական թարգմանությունը:

- բ. Գրի՛ր քեզ ուղղված համարը՝ օգտագործելով «ես», «ինձ», «իմ» բառերը:
6. Փորձի՛ր բացատրել այդ համարը՝ ինքդ քեզ պատկերացնելով այն մարդկանց փոխարեն, ում մասին նշված է այդ հատվածում: Ինքդ քեզ հարցրո՛ւ.
- ա. Ի՞նչ է նա զգացել:
- բ. Ի՞նչ է նա հասկացել:
- գ. Ի՞նչ է նա սովորել:
- դ. Ի՞նչ կանեի ես, եթե լինեի այդ անձնավորության փոխարեն:
7. Ինչքանո՞վ այս համարը կապ ունի իմ առօրյա կյանքի հետ:
- ա. Ինչքանո՞վ է այս համարը վերաբերում իմ խնդիրներին, որոնց ես այսօր հանդիպում եմ:
- բ. Այս համարը ինձ օգնում է տեսնե՞լ իմ խնդիրները, թե՞ այն ինձ նոր լուծումներ է առաջարկում:
- գ. Ինչպե՞ս այս համարը կարող է ինձ օգնել՝ բնավորության հոգևոր գծեր զարգացնելու հարցում:
- դ. Եթե ես սա կիրառեմ իմ կյանքում, ինչպե՞ս կփոխվեն իմ մտքերն ու վարքը:

Lyman Coleman-ի Serendipity գրքերը և *Serendipity Bible*-ը բազմաթիվ հետաքրքիր այլ նախագծեր են պարունակում, որոնք կարող են օգտագործվել որևէ հատվածի իմաստն ընկալելու համար:

3. Կիրառի՛ր այն քո կյանքում:

(Ինչպե՞ս կարող եմ սա կիրառել իմ առօրյա կյանքում):
Անձնական կիրառություն:

Դու չես կարողանա պատշաճ ձևով կիրառել որևէ համարի ուսուցումը քո կյանքում, եթե սկզբում չիմանաս փաստերը և պարզորոշ չհասկանաս դրանք:

Առակաց 18:13-ն ասում է. «Ով պատասխան է տալիս նախքան մի բան լսելը, դա հիմարությունն ու ամոթ է իր համար»:

Երբորդ քայլի նպատակը տվյալ հատվածի ուսուցումները քո առօրյա կյանքում կիրառելն է: Ինչպե՞ս դու կարող ես վերցնել տվյալ հատվածի ուսուցումները և դարձնել քո մտքերի և քայլերի մի մասը: Քո՝ որպես քրիստոնյայի, պատասխանատվությունը Աստծո ամբողջ Խոսքը քո կյանքի բոլոր ասպարեզներում ճշգրտորեն կիրառելն է: Նպատակ դիր՝ գրի առնելու, թե ինչպես ես դու կիրառելու քո կողմից ուսումնասիրվող յուրաքանչյուր համար: Տե՛ս Հակոբոս 1:21-27-ը:

Դու պետք է կատարելապես հետևես այս համարին, եթե ուզում ես, որ քո աստվածաշնչյան ուսումնասիրությունը քեզ օգնի: Եթե դու չկիրառես այն, ինչ կարդում ես և ուսումնասիրում, Աստվածաշնչի ուսումնասիրությունը քեզ համար կդառնա ձանձրալի և անհետաքրքիր:

Նախագծեր:

1. Խնդրի՛ր Սուրբ Հոգուն, որ օգնի քեզ: Խնդրի՛ր Նրան, որ ցույց տա քեզ քո կարիքները, թուլությունները, թերությունները և խնդիրները: Խնդրի՛ր Նրան, որ օգնի քեզ՝ դեմ կանգնել քո խնդիրներին, խնդրի՛ր Նրան, որ օգնի՝ լուծումներ գտնել՝ դրանց համար, երբ ուսումնասիրում ես Աստվածաշունչը:
2. Փնտրի՛ր ձևեր, թե ինչպես կարող ես կիրառել քո սովորածները: Փնտրի՛ր հնարավոր լուծումներ քո կյանքի խնդիրների համար: Ինչպե՞ս կարող ես կիրառել քո սովորածներն այն կոնկրետ իրավիճակներում, որ ունենում ես հետևյալ անձնավորությունների հետ քո փոխհարաբերություններում.

ա) Աստված	ե) քո առաջնորդները
բ) ինքդ	զ) քո ուսուցիչները
գ) քո ընտանիքը	է) քո հին ընկերները
դ) քո սենյակակիցը	ը) տարբեր էթնիկական կամ ռասայական ծագում ունեցողներ

Գերազանց կլինի, եթե դու ժամանակ հատկացնես և մեկ այլ անձնավորության հետ քննարկես, թե ինչպես կարող ես տվյալ համարը կիրառել քո կյանքում: Նման քննարկումը կարող է նոր մտքեր առաջ բերել, որոնց մասին դու նախկինում չես մտածել: Սա նաև հրաշալի հնարավորություն է՝ սովորելու համար, թե ինչպես զրուցել մեկ այլ քրիստոնյայի հետ, ով քո հին կյանքի ընկերներից տարբերվում է:

3. Որոշում կայացրու՝ կիրառելու այն, ինչ սովորել ես:
4. Նպատակնե՛ր դիր: Գրի՛ առ դրանք: Դրանք հնարավորինս պարզեցրո՛ւ, որպեսզի հետագայում կարողանաս գնահատել քո նպատակները՝ տեսնելու համար, թե արդյո՞ք հասել ես դրանց: Տե՛ս 41-42-րդ էջը՝ նպատակներ դնելու առումով ավելի շատ օգնություն ստանալու համար:
5. Ստուգի՛ր քո նպատակները: Տե՛ս, թե ինչքանով են աստվածաշնչյան սկզբունքները գործում քո կյանքում:
6. Գնահատի՛ր դրանց արդյունքները քո կյանքում: Ստուգի՛ր, որպեսզի տեսնես, թե որքանով ես լավ կատարել դրանք: Դու, հնարավոր է, կարիք ունենաս վերանայելու քո նպատակները:

7. Կիսվի՛ր մյուսների հետ, թե ինչպես ես տվյալ համարը կիրառել քո կյանքում:
Քաջալերի՛ր նրանց և ցո՛ւյց տուր, թե ինչպես կարող են նրանք էլ նույնն անել:

Աստվածաշնչի ուսումնասիրություն սկսելիս համոզվի՛ր, որ հիշում և օգտագործում ես այս երեք հիմնական քայլերը: Աստվածաշնչի ուսումնասիրությունը քեզ շատ քիչ կօգնի, եթե դու պարզապես կարդաս Աստվածաշունչը: Դու պետք է դրանից այն կողմ անցնես և այն կապես քո կյանքի հետ, իսկ հետո գործի դնես: Ինչքան շատ անես սա, այնքան շատ կաճես դու:

Մարկոս 4:24.

«Եվ ասաց նրանց. «Զգո՛ւյշ եղեք, թե ինչ եք լսում. ինչ չափով որ չափեք, դրանով էլ ձեզ պիտի չափվի. և ձեզ, որ լսում եք՝ ավելին պիտի տրվի»:

Մեզ համար առաջնային կարևորություն պետք է լինի Աստծո Խոսքի կիրառումը: Շատ կան համարներ, որոնք դժվար կիրառելի են. մենք պարզապես չենք ունենում համապատասխան ուժ՝ ամեն օր անելու այն, ինչ Աստված է մեզ ասում, որ անենք: Ուրեմն, ի՞նչ պետք է դու անես, հանձնվե՞ս: Երբե՛ք:

Աստված խոստացել է, որ երբ մենք տկարանանք, մեզ կտա հարկ եղած գորությունը: Սա այն ժամանակ է լինում, երբ մեր հավատն Աստծո հանդեպ դառնում է գործնական գորություն մեր կյանքում: Աստծո հանդեպ հավատը և Աստծո գորությունը քեզ կօգնեն՝ նոր ձևով արձագանքելու համար: Աստված, հնարավոր է, քեզ այնպիսի գորություն չտա, որ մի մեծ քայլով սարը միանգամից բարձրանաս, սակայն կարող ես վստահ լինել, որ Նա քեզ ուժ կտա՝ քայլ առ քայլ առաջ գնալու, ամեն օր ավելի շատ սովորելու՝ թե ինչպես աճես և Նրա խոսքը շարունակաբար կիրառես քո ամենօրյա կյանքում:

Բ. Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկեր:

Մեկ այլ գործնական ձև՝ Աստվածաշնչի ուսումնասիրությունը կիրառելի դարձնելու համար, այն է, որ սկսես այն մարտահրավերներից, որոնց դու ամեն օր հանդիպում ես: 20-րդ էջում գտնվող՝ **Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության** պատկերը քեզ մի օրինակ է տալիս, թե ինչպես կարելի է զանազանել քո կյանքի իրավիճակները, որը քեզ կօգնի Աստվածաշնչի ուսումնասիրությունն ավելի արդյունավետ դարձնել:

Այս պատկերը սկսվում է քո կյանքից, հետո անցնում է Աստվածաշնչի ուսումնասիրությանը, այնուհետև հետ ես գալիս քո կյանքին՝ Աստծո Խոսքից վերցրած նոր մտքերով, և աշխատում ես քո անձնական կիրառության վրա:

Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկեր

1. Գրի՛ր սթրեսային իրավիճակներ.
 - Իրավիճակներ, որտեղ ես հեշտությամբ եմ լարվում, հիասթափվում, բարկանում, նյարդայնանում կամ ճնշվում:
2. Աստծո՛ւն տուր այս հարցը.
 - «Աստվա՛ծ իմ, ի՞նչ ես Դու փորձում ինձ սովորեցնել, որ ես **անեմ այսօր**»:
3. Գտի՛ր քո կյանքում մի ասպարեզ, որտեղ դու **ուզում ես աճել**.
 - Օգտագործի՛ր Ա Կորնթացիներին 13:4-8-ը՝ գտնելու համար այն հնարավոր ասպարեզները, որտեղ դու աճելու կարիք ունես:
4. Կապի՛ր դա քո **Աստվածաշնչի ուսումնասիրության** հետ.
 - Ի՞նչ ունի Աստվածաշունչն ասելու այն ասպարեզի վերաբերյալ, որտեղ դու ուզում ես աճել:
5. Գրի՛ր բաներ, որոնք դու կարող ես ավարտել այսօր.
 - Մի խոսքով՝ նպատակնե՛ր դիր:
 - Ընտրի՛ր նպատակներից մեկը և այն կատարի՛ր այսօր:
6. Գնահատի՛ր արդյունքները.
 - Ավելի ուշ՝ այդ օրը կամ հաջորդ օրը, վերանայի՛ր, թե ինչ տեղի ունեցավ, երբ դու փորձեցիր հասնել քո դրած նպատակին:

Աստվածաշնչի ուսումնասիրության տարբեր մեթոդներ գործածելիս խնդրի՛ր Աստծուն, որ օգնի քեզ՝ տեսնելու համար, թե ինչպես կիրառես Նրա Խոսքը քո ամենօրյա կյանքում: Կան Աստվածաշնչի ուսումնասիրության տարբեր մեթոդներ, որոնք կարող են օգտագործվել **Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության** պատկերի 4-րդ կետում:

Դու կարող ես գնել J.C. Countryman-ի՝ *“God’s Promises for Men,”* կամ՝ *“God’s Promises for Women”* գիրքը (Nelson Publ.), որը քեզ կօգնի գտնել կոնկրետ համարներ, որոնք վերաբերում են քո կյանքի կոնկրետ դեպքերին:

Մենք կարիք ունենք դառնալու Աստծո Խոսքի աշակերտները մեր ողջ կյանքի ընթացքում: Մենք միշտ նոր հնարավորություններ կունենանք Աստծո Խոսքը մեր կյանքում կիրառելու համար՝ անկախ մեր տարիքից: Երբ Աստծո Խոսքը քո կյանքում կիրառելը դարձնես քո կյանքի ամենազխավոր առաջնահերթությունը, դու կտեսնես, որ Աստվածաշնչի քո ուսումնասիրությունը շատ համապատասխան և գործնական է քո կյանքում:

Գլուխ 3.

Աստվածաշնչի անձնական և խմբային ուսումնասիրություն

Ա. Անձնական պաշտամունք

(Աստվածաշնչի անձնական ուսումնասիրություն)

1. Ի՞նչ է անձնական պաշտամունքը:

Անձնական պաշտամունքը մի հանդարտ ժամանակ է, որը դու առանձին անցկացնում ես Աստծո հետ՝ կարդալով Աստվածաշունչը և աղոթելով: Դա «անձնական» է, քանի որ կապ ունի միայն քո և Աստծո հետ: «Պաշտամունք» բառը (նշանակում է՝ երկրպագել, մեծարել) օգտագործված է, որովհետև դու Աստծուն պաշտելու ժամանակ ես տալիս Աստվածաշունչ կարդալու և աղոթքի միջոցով:

2. Ծրագրել անձնական պաշտամունքը:

ա. Ընտրի՛ր ժամանակը և վայրը:

Փորձի՛ր առնվազն տասը րոպե օրվա մեջ տրամադրել քո անձնական պաշտամունքին: Ընտրի՛ր այնպիսի ժամանակ, երբ դու արթուն և առույգ ես լինում: Փորձի՛ր ընտրել մի վայր, որտեղ դու միշտ կարող ես գալ, մի վայր, որտեղ քեզ չեն խանգարի: Փորձի՛ր ընտրել մի սենյակ, որտեղ հանգիստ կլինի, և քո ուշադրությունը չեն շեղի:

բ. Կարդա՛ Աստվածաշունչը և նշումնե՛ր արա:

Անձնական պաշտամունքի գլխավոր գործողություններից մեկը Աստվածաշունչ կարդալն է: Քո Աստվածաշնչից շատ ավելին վերցնելու ձևերից մեկը կարդալիս նշումներ անելն է:

Անձնական պաշտամունքը ժամանակի ընթացքում շատ հեշտությամբ կարող է կրոնական բնույթ կրել, դառնալ ձանձրալի և անիմաստ: Դրա համար պատճառ կհանդիսանա բազմազանության պակասը քո ընթերցանության մեջ, կամ գուցե այն, որ դու ընդամենը մի քանի համար ես կարդում, իսկ հետո մոռանում ես դրանք: Մի՛ մտիր միօրինակության մեջ՝ շարունակաբար նույն բաներն անելով:

Գործածի՛ր Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերը, երբ Աստվածաշունչ ես կարդում: Տե՛ս 2-րդ գլուխն այս երեք քայլերի մասին ավելի լավ տեղեկանալու համար: Եթե դու ուզում ես, որ քո Աստվածաշնչի ուսումնասիրությունն իրո՛ք օգտակար լինի քեզ համար, փորձի՛ր գտնել ձևեր, թե ինչպես կարող ես կիրառել քո կարդացածը: Պարզ նպատակնե՛ր գրիր և հետևի՛ր՝ տեսնելու համար, թե ինչ է տեղի ունենում:

գ. Աղոթի՛ր:

Երբ Աստվածաշունչ ես կարդում, աղոթի՛ր և խնդրի՛ր Սուրբ Հոգուն, որ օգնի քեզ՝ հասկանալու, թե ինչ է Աստված ուզում, որ դու սովորես Աստվածաշնչից: Աղոթի՛ր, որպեսզի տեսնես, թե ինչքանով է Աստվածաշունչը վերաբերում քո առօրյա կյանքում տեղի ունեցող իրավիճակներին: Աղոթի՛ր, որպեսզի Աստված օգնի քեզ՝ տեսնելու, թե ինչ լավագույն ձևով կիրառես այդ ուսուցումները քո առօրյա կյանքում:

Այս աղոթքի ժամանակը դարձրո՛ւ Աստծո հետ կիսվելու քո անձնական ժամանակը: Խոսի՛ր Նրա հետ այնպես, ինչպես կխոսեիր քո լավագույն ընկերոջ հետ: Գրի՛ առ այն ամենը, ինչի համար դու աղոթում ես, իսկ հետո գրի՛ առ, թե ինչպես է Աստված պատասխանել քո աղոթքներին:

3. Քո անձնական պաշտամունքի նպատակները:

ա. Աստված ինչ-որ բան պետք է ստանա դրանից:

Անձնական պաշտամունքը մի այնպիսի ժամանակ չէ, որի ընթացքում ընդամենը մի բան պիտի *ստանաս* Աստծուց: Ընդհակառակը, դա հնարավորություն է՝ շատ տալ Աստծուն քո այն ունեցածից, ինչը որ անձամբ քեզ համար արժեքավոր է: Ահա մի քանի արժեքներ, որոնք կարող ես տալ Աստծուն. 1) քո սերը, 2) քո ուշադրությունը, 3) քո փառաբանությունը, 4) քո պաշտամունքը:

բ. Դու պետք է գործություն ու օգնություն ստանաս դրանից:

Երբ աղոթելու և Աստվածաշունչ կարդալու համար ժամանակ ես հատկացնում, ակնկալի՛ր, որ Աստված կխոսի քեզ հետ: Ինչպե՞ս է Աստված մեզ հետ խոսում այսօր: Մի՛ սպասիր, որ Աստվածաշունչն ուսումնասիրելիս դու հանկարծ երկնքից եկող բարձր ու բարձր ձայն կլսես: Սակայն կարող ես զգալ, որ Աստված կխոսի քո սրտի հետ, և Սուրբ Գրքի համարները կկենդանանան քեզ համար:

Աստվածաշունչն ուսումնասիրելիս Աստծուց ակնկալի՛ր, որ Նա քեզ ցույց կտա, թե ինչ է ուզում, որ դու սովորես: Աստվածաշունչն ուսումնասիրելիս ակնկալի՛ր, որ քո կյանքի համար ունեցած՝ Աստծո նպատակը հստակ կդառնա: Հազվադեպ է պատահում, որ Աստված մարդուն հայտնի Իր կամքը նրա կյանքի հետագա հիսուն տարիների համար: Մակայն մենք կարող ենք ակնկալել, որ Աստված կօգնի մեզ՝ տեսնելու համար, թե ինչ է Նա ուզում, որ անենք այսօր: Աստված կարող է հոգս կամ փափագ դնել քո սրտում, որպեսզի որևէ ասպարեզում ներգրավվես ինչ-որ աշխատանքի կամ ծառայության:

Մենք մեր անձնական պաշտամունքի ժամանակին պետք է վերաբերվենք նույն ձևով, ինչ ձևով վերաբերվում ենք մեր ամենօրյա ուտելու հարցին: Մեզնից շատերն օրվա մեջ գոնե երեք անգամ ուտում են՝ զիտակցելով, որ երեկվա մեր կերածը չի դադարեցնի մեր քաղցածության ցավերն այսօր: Մենք նույն ձևով պետք է նայենք մեր անձնական պաշտամունքին՝ որպես մի ժամանակահատվածի, երբ մեր ամենօրյա հոգևոր սնունդն ենք ստանում Աստծուց և Աստվածաշնչից:

Եթե դու քո անձնական պաշտամունքից ոչինչ չես ստանում, ԿԱ՛ՆԳ ԱՌ: Պարզի՛ր, թե ինչու է այդպես լինում: Հնարավոր է՝ դու ոչինչ չես ստանում, քանի որ ոչինչ չես տալիս: Երբ դու Աստծուն տաս քո անձնական արժեքները, Նա քեզ կտա պետք եղած զորությունը: Տե՛ս Ա Կորնթացիներին 10:13:

Այնուամենայնիվ, դու կարիք ունես հասկանալու, որ անձնական պաշտամունքը քեզ իր մեծագույն օգուտը կտա, երբ փորձես Աստծո Խոսքը կիրառել քո առօրյա կյանքում: Սա կարող է շատ դժվար լինել քեզ համար: Քո անձնական պաշտամունքից առավելագույն օգուտ քաղելը դժվար աշխատանք է: Բայց եթե դու ժամանակ ու ջանք ներդնես, այն կարող է քեզ օգնել, որպեսզի աճես և Աստծո տեսանկյունից հասունանաս:

Բ. Աստվածաշնչի խմբային ուսումնասիրություն և ընտանեկան պաշտամունք:

1. Ի՞նչ է ընտանեկան պաշտամունքը և Աստվածաշնչի խմբային ուսումնասիրությունը:

ա. Ընտանեկան պաշտամունք:

Ընտանեկան պաշտամունքը նման է անձնական պաշտամունքին: Սա այն պահն է, երբ քո ողջ ընտանիքը հավաքվում է, և միասին Աստվածաշունչ էք կարդում, քննարկում էք այն և աղոթում:

բ. Աստվածաշնչի խմբային ուսումնասիրություն:

Աստվածաշնչի խմբային ուսումնասիրությունը մի խումբ մարդկանց պարբերաբար մեկտեղ հավաքվելն է՝ Աստվածաշունչ կարդալու, քննարկելու և աղոթելու համար:

2. Ծրագրել քո ընտանեկան պաշտամունքի ժամանակը:

ա. Ընտրի՛ր այնպիսի ժամանակ, երբ քո ամբողջ ընտանիքը կարող է միասին հավաքվել:

Դարձրո՛ւ դա քո յուրաքանչյուր օրվա անբաժանելի մասը: Օրինակ՝ ճաշից հետո, երբ ողջ ընտանիքը ներկա է: Ընտրի՛ր մի վայր, որտեղ հանգիստ կզգաք ձեզ: Անջատե՛ք հեռուստացույցը, ռադիոն, հեռախոսները և տեսախաղերը:

բ. Աստվածաշո՛ւնչ կարդացեք:

Ձեզնից մեկը կարող է մեկ համար կարդալ, կամ կարող եք մի հատված ընտրել, և ամեն մեկը մեկական համար կարդա:

Պաշտամունքի վերաբերյալ բազմաթիվ տարբեր գրքեր կան, որոնք իդեալական են ընտանեկան պաշտամունքի և Աստվածաշնչի խմբային ուսումնասիրության համար: Այդ գրքերից շատերն ամեն օրվա համար Աստվածաշնչյան մեկական համար են առաջարկում: Օգտագործի՛ր Աստվածաշնչի այնպիսի թարգմանություն, որը հասկանալի կլինի քո ընտանիքի բոլոր անդամների համար:

գ. Քննարկում:

Ժամանակ հատկացրո՛ւ՝ քննարկելու համար ձեր կարդացած հատվածը: Կարևոր է, որ բոլորը հասկանան այդ հատվածը: Դուք նաև կարող եք քննարկել, թե ինչպես կարելի է կիրառել Աստվածաշնչյան տվյալ ճշմարտությունը: Դուք կարող եք կիսվել, թե ինչպես եք արդեն կիրառել աստվածաշնչյան այլ համարներ:

Սա նաև լավ ժամանակ կլինի ընտանիքում եղած որևէ խնդիր քննարկելու համար: Կարևոր է, որ քո ընտանիքը տեսնի և սովորի, թե ինչպես կարելի է Աստվածաշունչն օգտագործել ընտանեկան խնդիրները լուծելու համար:

դ. Աղոթե՛ք:

Ժամանակ հատկացրեք միասին աղոթելու համար: Մի ասացվածք կա, որը շատ տեղին է. «Միաբան աղոթող ընտանիքը միաբան է»: Դու կարող ես այս ժամանակն օգտագործել՝ քո երեխաներին աղոթել սովորեցնելու համար՝
1) լսելով, թե ինչպես եք դուք աղոթում, 2) թույլ տալով, որ իրենք էլ աղոթեն:

3. Ընտանեկան պաշտամունքի (Աստվածաշնչի խմբային ուսումնասիրության) նպատակները:

Շատ կան իմաստավից նպատակներ, որոնք դուք կարող եք դնել ձեր ընտանեկան պաշտամունքի (Աստվածաշնչի խմբային ուսումնասիրության) համար և աշխատել այդ ուղղությամբ: Ահա մի քանի նպատակներ, որոնք դուք կարող եք ունենալ.

- 1) Աստված պետք է ընդունի փառաբանությունը, պաշտամունքը և սերը:
- 2) Քո երեխաներին սովորեցրո՛ւ Աստվածաշունչ կարդալ և կիրառել այն իրենց կյանքում:
- 3) Քո երեխաներին սովորեցրո՛ւ աղոթել:
- 4) Օգնե՛ք մեկը մյուսին՝ Աստվածաշնչի խոսքերը ձեր ամենօրյա կյանքում կիրառելու նպատակով:
- 5) Ավելի լա՛վ ճանաչեք ձեզ շրջապատող մարդկանց (նրանց, ովքեր Աստվածաշնչի ուսումնասիրության քո խմբում են):
- 6) Մեկը մյուսի առաջ հաշվետո՛ւ եղեք, թե որքանով եք ապրում ըստ Աստծո ճշմարտության:

Գլուխ 4.

Աստվածաշնչի ուսումնասիրության մեթոդներ

Այսօր մեր ուսումնական համակարգը լի է ուսուցման տարբեր մեթոդներով: Միանգամայն ակնհայտ է, որ մարդը կարող է սովորել նաև այլ ձևերով, ոչ միայն պարզապես գիրք կարդալով: Սակայն երբ հարցը վերաբերում է ամեն օր Աստվածաշունչ ուսումնասիրելուն ու սովորելուն, շատերն իրենց սահմանափակում են լոկ մեկ մեթոդով՝ Աստվածաշունչ կարդալով: Այսօր՝ առավել քան երբևէ, մենք կարիք ունենք գտնել ստեղծագործ և հետաքրքիր մեթոդներ՝ Աստվածաշնչի ուսումնասիրության և Աստծո մասին սովորելու համար:

Մենք հիմա կքննարկենք Աստվածաշնչի ուսումնասիրության մի քանի մեթոդներ: Այդ մեթոդներից մի մասը կարելի է ավարտել 5-10 րոպեում: Մյուսները կարող են մինչև մեկ ժամ տևել:

Խնդրում եմ՝ հաշվի՛ առ. Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլխում հիմնականում սկզբում տրվում է յուրաքանչյուր մեթոդի բացատրությունը, իսկ այնուհետև տրվում է օրինակ, թե ինչպես է տվյալ մեթոդն աշխատում, երբ այն օգտագործում են աստվածաշնչյան որևէ հատվածի համար:

Աստվածաշնչի ուսումնասիրության մեթոդներ

ԱՀԱԿ մեթոդ	Բացատրություն	Էջ 27
	Օրինակ	Էջ 28
Համարներ անգիր անել		Էջ 29
Մտածել Աստծո Խոսքի շուրջ		Էջ 35

Ա. ԱՀԱԿ մեթոդ (օրինակը տե՛ս 25-26-րդ էջերում):

Աստվածաշնչի ուսումնասիրության ԱՀԱԿ մեթոդը շատ պարզ է, որը կարելի է անել մի քանի րոպեում: Այս մեթոդն օգտագործելիս դու կարող ես աստվածաշնչյան որևէ հատվածի վրա անցկացնել ևս մեկ կամ երկու ժամ՝ կախված այն բանից, թե ինչքան մանրամասն ես ուզում պատասխանել հարցերին:

ԱՀԱԿ մեթոդի երեք բաժինները նման են *Աստվածաշնչի ուսումնասիրության երեք հիմնական քայլերին* (տե՛ս Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը): Ստորև բերվում է բացատրությունը, թե ինչպես է գործում ԱՀԱԿ մեթոդը:

1. Ամբողջացնել (Ա):

- ա. Նշումներ արա, թե ինչի մասին է տվյալ հատվածը: Քո սեփական բառերով գրի՛ր, թե ինչի մասին է յուրաքանչյուր համարը: Ամեն մի համարի համար առանձին գրանցո՛ւմ արա:
- բ. Գրի՛ր քո սեփական կարծիքն այդ համարների վերաբերյալ:

2. Հարցեր (Հ):

Գրի՛ր ցանկացած հարց, որ դու ունես այդ հատվածի վերաբերյալ: Դու կարող ես յուրաքանչյուր հարցի մոտ դատարկ տեղ թողնել, որպեսզի հետո վերադառնաս և գրես քո պատասխանները: Դու կարող ես գրել նաև հարցեր այն մասին, թե ինչպես կարելի է կիրառել այդ համարների ուսուցումները, ինչ են տվյալ համարների մեջ մարդիկ զգացել այդ պահին, կամ՝ «Ինչո՞ւ» հարցեր:

3. Անձնական կիրառություն (ԱԿ):

Աստվածաշնչի ուսումնասիրության այս բաժնի հիմնական նպատակն է՝ գրի առնել այն բոլոր հնարավոր մտքերը, որոնք կարող ես մտածել, և որոնք մատնանշում են, թե ինչպես կարող ես այդ ճշմարտությունները կիրառել քո անձնական կյանքի առօրյայում: Այս բաժնին մի՛ նայիր ընդամենը որպես հնարավորության նպատակներ դնելու համար, որոնք պետք է իրականացնես: Թող քո ստեղծագործական երևակայությունը քեզ թելադրի հնարավոր ամեն տարբերակ, թե ինչպես այդ համարները գործածես քո կյանքում: Անձնական կիրառության այս բոլոր տարբեր հնարավորությունները դիտարկելուց հետո ընտրի՛ր դրանցից մեկը, որը դու կցանկանայիր գործի դնել վաղը կամ դրա հաջորդ օրը:

- ա. Գրի՛ր ձևեր, թե ինչպես ես կիրառելու տվյալ հատվածից քո սովորածները:
- բ. Ընտրի՛ր գոնե մեկ գործողություն, որը դու կարող ես կիրառել նույն օրվա (կամ շաբաթվա) մեջ, և ծրագրի՛ր, թե ինչպե՛ս, ե՛րբ, որտե՛ղ և ո՞ւմ հետ ես դա կիրառելու: Ավելի ուշ ստուգի՛ր քեզ՝ տեսնելու համար, թե ինչպես դա գործեց:

Օրինակ, ԱՀԱԿ մեթոդ. Ղուկաս 5:12-16

1. Ամբողջացնել:

- h. 12 (1) Մի բորոտ գալիս է Հիսուսի մոտ և ասում. «Տե՛ր, եթե կամենաս, կարող ես ինձ մաքրել»: Սա ցույց է տալիս, որ այդ մարդը հասկացել էր բժշկության իմաստն ու արժեքը: Ոչ թե եսասիրական ձգտումներ են, այլ այն, որ եթե Աստված կամենա, կարող է իրեն բժշկել:
- h. 12 (2) Նա չպահանջեց, որ Աստված բժշկի իրեն:
- h. 13 (3) Հիսուսը դիպավ նրան ու ասաց. «Կամենում եմ, մաքրվի՛ր»: Աստված կամենում էր, որ այդ մարդը բժշկվի:
- h. 13 (4) Հիսուսի խոսքերին անմիջապես հետևեց բժշկությունը. «Անմիջապես բորոտությունը գնաց նրանից»:
- h. 14 (5) Հիսուսը չէր ցանկանում, որ այդ լուրը տարածվեր: Նա բժշկված բորոտին ասում է, որ գնա քահանայի մոտ և հետևի հրեական օրենքին, որպեսզի օրինական ձևով ճանաչվի նրա բժշկությունը (մաքուր լինելը): Պատճառը՝ «որպեսզի նրանց վկայություն լինի»: Կա հստակ պատճառ, թե ինչու պետք է գնալ բժշկի մոտ՝ հաստատելու սեփական բժշկությունը: Դա այդ բժշկի և նրա հետ աշխատողների վկայության համար է:
- h. 15 (6) Հիսուսի հոչակն արագ տարածվում է, և մարդիկ ամբոխներով հետևում են Նրան և հիվանդներ բերում Նրա մոտ՝ բժշկվելու:
- h. 16 (7) Բայց Հիսուսը հաճախ էր թողնում և հեռանում անապատային լուռ, մեկուսացած վայրեր և աղոթում:
- h. 16 (8) Հիսուսը ցույց է տալիս միայնակ լինելու և Աստծո հետ ժամանակ անցկացնելու կարևորությունը:

2. Հարցեր:

- h. 12 (1) Ինչքա՞ն ժամանակ էր այդ մարդը բորոտ եղել:
- (2) Ինչքա՞ն հաճախ եմ ես Աստծուց պահանջում՝ ինչ-որ բան անել:
- (3) Աստված կկամենա՞ բավարարել իմ բոլոր կարիքները, երբ ես խնդրեմ Նրան:
- (4) Ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե արդյոք Աստված պատրա՞ստ է բավարարել իմ կարիքները:
- h. 13 (5) Ի՞նչ զգաց Հիսուսը, երբ բորոտը բժշկվեց:
- (6) Ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե երբ է Հիսուսը կամենում, որ տվյալ մարդը բժշկվի:

h. 14 (7) Ինչո՞ւ Հիսուսը բժշկված բորոտին ուղարկեց քահանայի մոտ:

(8) Ի՞նչ կաներ քահանան, երբ բժշկված բորոտը գնար նրա մոտ:

3. Անձնական կիրառություն:

h. 12 (1) Ես պետք է ակնկալեմ, որ Աստված կամենում է ինչ-որ բաներ անել ինձ համար:

h. 13 (2) Ես պետք է լավատես լինեմ, երբ աղոթում եմ:

h. 12 (3) Ես չպետք է պահանջներ ներկայացնեմ Աստծուն:

(4) Ես սկզբում պետք է պարզեմ, թե արդյո՞ք Աստված ուզում է դա անել:

h. 14 (5) Երբ ես աղոթում եմ, պետք է պատրաստակամ լինեմ՝ անելու այն, ինչ Աստված է ուզում, որ անեմ: Ես պետք է հնազանդվեմ Նրան:

(6) Ես պետք է հնազանդվեմ իմ առաջնորդներին ու երկրի օրենքներին:

(7) Եթե ես հիվանդ լինեմ, ու Աստված ինձ բժշկի, չպետք է վախենամ՝ գնալ բժշկի մոտ ստուգվելու:

h. 16 (8) Ես պետք է ժամանակ հատկացնեմ միայնակ աղոթելու համար՝ անկախ իմ զբաղվածության չափից:

Անձնական նպատակ. Այս շաբաթ ամեն օր ես իմ շրջապատի մարդկանց հետ կկիսվեմ աստվածաշնչյան մի համարով, որն Աստված օգտագործել է իմ սրտի հետ խոսելու համար:

Անձնական նպատակ. Ես կհարցնեմ իմ շրջապատի մարդկանց, թե ինչպես է Աստված հպվել նրանց, և գրի կառնեմ նրանց պատասխանները:

Բ. Համարներ անգիր անել:

1. Ի՞նչ է նշանակում համարներ անգիր անել:

Անգիր անել՝ պարզապես նշանակում է սովորել բառեր, որոնք դու կարող ես հիշելով կրկնել: Բառերը քո մտքում են, և դու կարող ես ցանկացած ժամանակ դրանք վերհիշել (կրկնել):

2. Ինչո՞ւ պետք է համարներ անգիր անես:

Համարներ անգիր անելը շատ հարցերում կարող է քեզ համար օգտակար լինել: Ահա այդ օգուտներից մի քանիսը.

- ա. Օգտագործի՛ր դա փորձություններին դեմ կանգնելու համար:
- բ. Օգտագործի՛ր դա քո խնդիրները լուծելու համար:
- գ. Դա կօգնի քեզ, որպեսզի ճիշտ մտքեր ունենաս:
- դ. Դա նախապատրաստում է քեզ, որպեսզի մտածես Աստծո Խոսքի վրա:
- ե. Օգտագործի՛ր այն, որպեսզի նախապատրաստվես վկայելու համար:
- զ. Դա օգնում է քեզ, որպեսզի սովորես մտածել այնպես, ինչպես Աստված է մտածում: Հռոմեացիներին 12:1-2-ում Աստված մեզ պատվիրում է նորոգել մեր մտքերը, այսինքն՝ սովորել մտածել այնպես, ինչպես Նա է ուզում, որ մտածենք:

3. Ինչպե՞ս կարող եմ համարներ անգիր անել:

Համարներ անգիր անելու մեջ ոչ մի հրաշագործ բան չկա: Այն պահանջում է ժամանակ, աշխատանք և, ամենաշատը, հետաքրքրություն: Իսկապես, համարներ անգիր անելիս ամենակարևորը քո հետաքրքրությունն է, ոչ թե կարդալու քո ընդունակությունը: Դու իրո՞ք ուզում ես անգիր անել այդ համարը:

Եթե դու երկար ժամանակ է՝ անգիր չես արել, սա քեզ համար դժվար աշխատանք կլինի, հատկապես, եթե ժամանակին թմրանյութեր ես օգտագործել: Թմրանյութ օգտագործելու վնասներից մեկը հիշողության կարճաժամկետ կորուստն է: Թին Չելենջի ուսանողուհիներից մեկն ասաց, որ իրենից վեց շաբաթ էր պահանջվել աստվածաշնչյան առաջին համարն անգիր անելու համար: Սակայն նա չնահանջեց, շարունակեց աշխատել դրա վրա և շուտով հայտնաբերեց, որ ավելի արագ է կարողանում դա սերտել:

Մարդկանց մեծ մասի համար համարներ անգիր անելու լավագույն տարբերակը չորս օր շարունակ օրական տասը րոպե ծախսելն է, քան 40 րոպե՝ մեկ օրում: Նույն համարի վրա մի քանի օր շարունակ աշխատելն ավելի կամրապնդի տվյալ համարը քո հիշողության մեջ, և դու ավելի երկար ժամանակ կկարողանաս այն հիշել:

Ահա մի քանի մտքեր, որոնք կարող են քեզ օգնել համարներ անգիր անելիս:

ա. Ուշադի՛ր եղիր հատվածն ընտրելիս:

Որոշ մարդիկ միայն մեկ համար են անգիր անում և անգիր անելու համար ամբողջ Աստվածաշնչում փնտրում են միայն առանձին համարներ: Դա նորմալ է, սակայն ավելի լավ է (և հեշտ) Աստվածաշնչից անգիր անել պարբերություններ կամ գլուխներ: Այսպես անելով՝ դու ավելի ամբողջական ես տեսնում և հասկանում այդ հատվածի համատեքստը:

Ի՞նչ թարգմանություն պետք է օգտագործես: Անգիր անելու համար չկա միակ լավագույն թարգմանությունը: Այնուամենայնիվ, ուշադրությո՛ւն դարձրու այն հանգամանքին, թե ինչ մարդկանց համար ես դու հետագայում ցանկանալու մեջբերում անել քո անգիր արած համարը: Եթե այդ համարը հիմնականում օգտագործելու ես ավետարանչության, այսինքն՝ ոչ-քրիստոնյաների համար, ապա ընտրի՛ր այնպիսի թարգմանություն, որը ոչ-քրիստոնյաները հեշտությամբ կհասկանան:

բ. Տվյալ համարը գրի՛ր փոքրիկ քարտի վրա:

Գրի՛ր այդ համարը փոքրիկ քարտի վրա և այն պահի՛ր գրպանումդ: Ազատ ժամանակ դու կարող ես այն կրկնել:

Օրինակ.

Կողմ 1.

«Արդ, ավարտի՛ն հասցրեք սա, որպեսզի ինչպես հոժարությամբ սկսել եք, այնպես էլ ձեր ունեցածի չափով կատարեք»:

Կողմ 2.

Բ Կորնթացիներին 8:11

գ. Անգի՛ր արա համարը՝ ամեն անգամ սովորելով երեք կամ չորս բառ:

Երեք կամ չորս բառ անգիր անելուց հետո անցի՛ր հաջորդ 3-րդ կամ 4-րդ բառերին: Շարունակի՛ր ամեն անգամ երեք կամ չորս բառ ավելացնել, և շուտով դու ողջ համարն անգիր արած կլինես: Գրի՛ր այդ համարը՝ ինքդ քեզ ստուգելու՝ թե արդյոք ք լավ ես անգիր արել այն:

Օրինակ. Բ Կորնթացիներին 8:11.

«Արդ, ավարտի՛ն հասցրեք սա,

որպեսզի ինչպես հոժարությամբ սկսել եք,

այնպես էլ ձեր ունեցածի չափով կատարեք»:

դ. Համարներն անգի՛ր արա ուրիշների հետ:

Թող ձեզնից մեկը կարդա համարը, իսկ հետո միասին կրկնե՛ք այն: Մեկ այլ տարբերակ է, երբ խմբի անդամներից ամեն մեկը համարից մեկական բառ է ասում:

ե. Պատկերացրո՛ւ այդ համարը նկարի տեսքով (մտքում կամ թղթի վրա):

Եթե դու կարողանաս ինքդ քեզ պատկերացնել այդ համարը սերտելիս, դա կարող է քեզ օգնել՝ ավելի լավ հիշելու և անգիր անելու այն: Շատ ավելի հեշտ է նկարը հիշելը, քան ընդամենը բառերը:

Նկարն այնպե՛ս պատկերացրու, կարծես դու ես անում այն, ինչի մասին որ համարն է ասում:

Ահա մի օրինակ Բ Կոնթացիներին 8:11-ի վերաբերյալ:



Արդ (շարունակելով),



ավարտի՛ն հասցրեք սա



որպեսզի ինչպես հոժարությամբ սկսել եք,



այնպես էլ ձեր ունեցածի չափով կատարեք.

գ. Շարունակ վերանայի՛ր:

Շարունակ վերանայի՛ր քո անգիր արած համարները: Մա քեզ կօգնի, որպեսզի մի քանի օրից չմոռանաս դրանք: Ինքդ քեզ ստուգելու լավագույն ձևերից մեկը սովյալ համարը թղթի վրա գրելն է:

4. Ինչպե՞ս կարող եմ համարներ անգիր անելը դարձնել առավել օգտակար իմ կյանքում:

ա. Փնտրի՛ր ձևեր՝ այս համարները քո առօրյա փորձառության հետ կապելու համար:

Երբ մենք սույն Ուսանողի ձեռնարկի 20-րդ էջում քննարկում էինք Կյանքից կյանք սովորելու՝ Աստվածաշնչի ուսումնասիրության պատկերը, խոսեցինք այն մասին, որ հատկապես կարևոր է սկսել մեր կյանքի սթրեսային իրավիճակներից, որոնք կարող են մեզ օգնել՝ Աստվածաշնչի մեր գործնական ուսումնասիրության մեջ լուծումներ գտնելու հարցում:

Եթե դու քո սթրեսային իրավիճակների ցուցակն արդեն կազմել ես, ապա կարող ես նայել, թե ինչքանով է քո անգիր սովորած համարը վերաբերում դրանց: Անդրադարձի՛ր քո կյանքի նաև այլ ասպարեզներին, որոնցում այդ համարը տեղին է: Ինչքան շատ ես քո ամենօրյա կյանքի հետ այդ փոխկապակցվածությունները տեսնում, այնքան քեզ համար ավելի իմաստալից է դառնում այդ համարը:

բ. Կիրառի՛ր այն քո կյանքում:

Համարներ անգիր անելու ամենակարևոր նպատակն այն է, որ այն կիրառես քո կյանքում: Համարն ընդամենն անգիր իմանալը քիչ արժեք ունի, իսկ կյանքում այն կիրառելը՝ մեծ: Անգիր արած համարը հեշտ է լինում վերհիշել, երբ քո առօրյա կյանքում հանդիպում ես մի իրավիճակի, որտեղ կարող ես կիրառել Աստծո Խոսքից վերցրած այդ գործնական ճշմարտությունը:

Խնդրի՛ր Աստծուն, որ օգնի քեզ ավելի գործնական ձևեր գտնելու՝ թե ինչպես կիրառես յուրաքանչյուր համարը, որը դու անգիր ես անում:

գ. Աստծուց հատուկ համա՛ր խնդրիր քո կյանքի համար:

Թին Չելենջն ավարտած շատ մարդիկ, ինչպես նաև նրանք, ովքեր երկար տարիներ ծառայում են Աստծուն, հաճախ ունենում են Աստվածաշնչից վերցրած առնվազն մեկ համար, որն իրենց համար դարձել է «կյանքի համար»: Դա նրանց կյանքում հզոր մի օգնություն է Հիսուսի հետ իրենց ընթացքի մեջ:

Դու նույնպես կարող ես Աստծուն խնդրել՝ քո ուշադրությունն այդպիսի մի հատուկ համարին ուղղելու համար: Մի՛ սպասիր, որ երկնքից ուժեղ, ամպագոռոզոտ ձայն կգա, այլ նայի՛ր այն համարներին, որոնք քեզ համար ավելի ու ավելի օգտակար են դառնում:

դ. Աստվածաշնչից հատվածնե՛ր անգիր արա:

Շատ նորադարձ քրիստոնյաներ սկսում են Աստվածաշնչից առանձին համարներ անգիր անել. սա նորմալ է: Մակայն հրաշալի է առաջ շարժվել նաև դեպի ավելի մեծ մարտահրավերների՝ Աստվածաշնչից հատվածներ անգիր անելուն: Դա կարող է լինել պարբերություն՝ կազմված մի քանի համարներից, օրինակ՝ Եփեսացիներին 6:10-18-ը, կամ Բ Պետրոս 1:3-9-ը, կամ Փիլիպպեցիներին 2:1-11:

Դրանից հետո դու կարող ես առաջ գնալ և ամբողջ գլուխներ անգիր անել: Ահա մի քանի հրաշալի գլուխներ, որոնց ուղղությամբ դու կարող ես մտածել.

Մատթեոս 5, 6, 7

Կողոսացիներին 3

Մաղմոս 23

Ա Թեսաղոնիկեցիներին 4

Հակոբոս 1

Ա Հովհաննես 1

Ա Կորնթացիներին 13

Եբրայեցիներին 12

Եթե իրո՛ք ուզում ես արմատական լինել, առա՛ջ գնա և անգի՛ր արա Աստվածաշնչի ամբողջական գրքեր: Այո՛, դա հնարավոր է: Քեզ նման այլ մարդիկ դա արդեն արել են: Նրանցից ոմանք դա սկսելուց առաջ տարիներ շարունակ թմրանյութից կախվածություն են ունեցել: Ահա մի քանի գրքեր, որոնցից դու կարող ես սկսել. Հակոբոս, Կողոսացիներին, Եփեսացիներին և Մարկոս:

Մաղմոսերգուն գրում է, թե որքան հզոր է Աստծո Խոսքը մեզ օգնելու հարցում:

Մաղմոս 119:9,11.

«Երիտասարդն ինչո՞վ մաքրի իր ճամփան. Քո խոսքի համեմատ դրան զգուշությամբ մոտենալով: Քո խոսքերն իմ սրտում թաքցրի, որպեսզի չմեղանչեմ Քո դեմ»:

Եթե մենք անգիր անենք Աստծո Խոսքը և պահենք մեր սրտում, այն մեզ կօգնի, որպեսզի փորձություններին դեմ կանգնելու ուժ ունենանք, և կսովորեցնի, թե ինչպես ապրել Հիսուսի նման:

ե. Համարներ անգիր անելն օգնում է մեզ՝ նորոգել մեր միտքը:

Հռոմեացիներին 12:2-ում մենք Աստծուց պատվեր ունենք՝ փոխել մեր մտածելակերպը: Մենք բոլորս այս ասպարեզում աճելու կարիք ունենք:

Հոմեագիներին 12:2.

«Եվ մի՛ կերպավորվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ քննեք, թե ո՞րն է Աստծո կամքը՝ բարին, ընդունելին և կատարյալը»:

Աստված հրաշագործ ձևով չի հպվի քո մտքին ու նորոգի այն: Դո՛ւ պետք է դա անես: Նորի՛ց նայիր այս համարը: Այն չի ասում. «Աղոթի՛ր և խնդրի՛ր, որ Աստված նորոգի քո միտքը»: Դա քո՛ միտքն է: Աստված քեզ է ասում, որ նորոգես այն: Նա քեզ կօգնի, բայց դո՛ւ պետք է անես այդ գործը:

Քո միտքը մեղսալից մտքերից մաքրագատելու հզոր միջոցներից մեկը դրանք անգիր արած համարներով փոխարինելն է: Ամեն անգամ, երբ մի մեղսալից միտք է հայտնվում քո գլխում, դրան արձագանքի՛ր քո անգիր արած համարներով:

զ. Մտածի՛ր քո անգիր արած համարների շուրջ:

Սույն Ուսանողի ձեռնարկի հաջորդ բաժնում մենք կդիտարկենք մի քանի գործնական ձևեր, թե ինչպես կարող ես մտածել Աստծո Խոսքի վրա: Ինչքան շատ մտածես քո անգիր արած համարների շուրջ, այնքան ավելի շատ կսովորես Աստծուց:

Գ. Մտածել Աստծո Խոսքի շուրջ:

1. Ի՞նչ է նշանակում մտածել:

Բառարանը մտածել բառը սահմանում է որպես՝ «օբյեկտիվ իրականության երևույթները գուգադրելով, վերլուծելով ու հետևություններ անելով դատել»: Մտածել նշանակում է. «խորհել, խորհրդածել, խոկալ, մտորել, դատել, մտախորհել, մտահայել»: Մտածելը մի բանի վրա շատ կենտրոնանալը չէ, ծանր աշխատանք չէ:

Աստվածաշնչում բազմիցս կարելի է հանդիպել Աստծո Խոսքի շուրջ մտածելու մասին: Աստծո Խոսքի շուրջ մտածել նշանակում է՝ թույլ տալ Աստվածաշնչի համարներին՝ անցնել քո մտքով, զգացմունքներով ու կամքով, և թույլ տալ Աստծո Խոսքին՝ դառնալ քո կյանքի մի մասը: Դու թույլ ես տալիս, որ Աստծո ճշմարտությունները դառնան քո մտքերի, վերաբերմունքների, զգացմունքների և գործողությունների անբաժանելի մասը:

Մտածելու համեմատական պատկերներից մեկը որոճալն է, երբ կովը կերած խոտն է ծամում: Մկզբում կովն արագ ծամում է խոտն ու կուլ տալիս այն: Իսկ հետո նստում է, ստամոքսից հետ է բերում իր կուլ տվածը (հուսով եմ՝ տհաճ չի հնչում) ու սկսում «ծամոն ծամելու նման» որոճալ այն: Երբ կովը որոճում է ուտելիքը, նա դրանից վերցնում է այն սննդարարն ու արժեքավորը, որն օգնում է

նրան աճել: Աստված այսպիսին է ստեղծել կովին: Կարծում եմ՝ ուրախ ես, որ Աստված մեզ ուտելու այլ ձև է տվել:

Մարդու՝ հոգևորապես սնվելը կարող ենք համեմատել կովի ուտելու և որոճալու հետ: Աստծո Խոսքը մեր մտքով անցկացնելուց հետո կարող ենք այն կրկին հետ բերել մեր մտքի դաշտ ու նորից ու նորից մտահայել դրա շուրջ՝ սովորելու համար այն ամենը, ինչ Աստված է ուզում, որ մենք սովորենք այդ համարներից: Դրանից հետո այդ համարները կարող են մտնել մեր սրտի մեջ և մեծ ազդեցություն թողնել մեր կյանքի վրա՝ հատկապես, երբ սկսում ենք դրանք կիրառել առօրյա կյանքում:

2. Ո՞րն է անգիր անելու և մտածելու միջև եղած տարբերությունը:

Ահա մի քանի օրինակներ, թե ինչպես են որոշ նորադարձ քրիստոնյաներ բացատրել դրանց միջև եղած տարբերությունը:

- ա. Անգիր անել նշանակում է՝ պարզապես իմանալ այն:
Մտածել դրա շուրջ՝ նշանակում է՝ դարձնել այն քո մի մասը:
- բ. Անգիր անել նշանակում է՝ իմանալ այն գլխում: Մտածելը թույլ է տալիս դրան խորասուզվել քո մտքի մեջ, որպեսզի այն դառնա քո մտքերի անբաժան մասը:
- գ. Անգիր անել նշանակում է՝ պարզապես ի վիճակի լինել այն մեջբերել:
Մտածելը դրա շուրջ խորհրդածելն է, որպեսզի հասկանաս այն:

Մտածելը անգիր անելուց այն կողմ է անցնում: Դու կարող ես համարներ անգիր անել և ընդամենը մի քանի փաստ ավել ունենալ քո գլխում: Իսկ համարների շուրջ՝ մտածել նշանակում է՝ թույլ տալ Աստծո Խոսքին՝ գործել քո կյանքում և փոխել քեզ:

3. Ինչո՞ւ ես պետք է մտածեմ Աստծո Խոսքի շուրջ (որո՞նք են դրա օգուտները):

Աստված ոչ մի հատուկ օրհնություն չի խոստանում նրանց, ովքեր պարզապես անգիր են անում Իր Խոսքը: Սակայն Աստված սքանչելի օրհնություններ է խոստանում այն մարդուն, ով իր կյանքում պարբերաբար մտածում է Աստվածաշնչի ճշմարտությունների շուրջ:

- ա. Դու հաջողակ կլինես. Հեսու 1:8
- բ. Ինչ որ անես, կհաջողվես. Սաղմոս 1:2-3
- գ. Քո իմաստությունն ու զիտելիքները կաճեն. Սաղմոս 119:97,100

դ. Դու իշխանություն կունենաս մեղքի և փորձությունների վրա.
Սաղմոս 119:9,11

ե. Դու ավելի կնմանվես Աստծուն քո մտածելու, զգալու և վարվելու մեջ:

4. Ինչպե՞ս կարող եմ մտածել Աստծո Խոսքի շուրջ (մեթոդներ):

Դավիթը, որն ըստ Հին Կտակարանի՝ 40 տարի շարունակ Իսրայելի թագավորն էր, խոսում էր այն մասին, թե ինչպես էր անձամբ ինքը գիշեր ու ցերեկ մտածում Աստծո Խոսքի շուրջ: Տե՛ս Սաղմոս 1:2-3-ը: Եթե մշտազբաղ թագավորը կարողանում էր ժամանակ գտնել Աստծո Խոսքի շուրջ մտածելու համար, ապա, անտարակույս, դու էլ կարող ես ժամանակ գտնել այդ կարևոր գործի համար:

Ահա մի քանի խորհուրդներ, որոնք քեզ կօգնեն՝ մտածել Աստծո Խոսքի շուրջ:

ա. Անգի՛ր արա համարը:

Տե՛ս սույն Ուսանողի ձեռնարկի 29-րդ և 34-րդ էջերը՝ անդրադառնալու համար բացատրությանը, թե ինչպես կարելի է աստվածաշնչյան համարներ անգիր անել:

Օրինակ, **Հակոբոս 1:2.**

«Եղբայրներ՛ րս, երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք,
այդ բոլորն ուրախություն համարեցե՛ք»:

բ. Մաքրի՛ր միտքդ արտաքին այլ մտքերից:

Անջատի՛ր հեռուստացույցը, ռադիոն, նվագարկիչը, բջջային հեռախոսը և տեսախաղերը: Մի պահ դադարի՛ր մտածել օրվա խնդիրների ու գործերի մասին:

գ. Ուշադրությունդ կենտրոնացրո՛ւ տվյալ համարի միայն մի փոքր մասի վրա:

Օրինակ. «... ուրախություն համարեցե՛ք...». Հակոբոս 1:2:

դ. Անցկացրո՛ւ այն քո մտքով:

Օրինակ. Ի՞նչ է նշանակում՝ «ուրախություն համարեցե՛ք»:

ե. Անցկացրո՛ւ այն քո զգացմունքներով:

Օրինակ. Ինչպե՞ս կարող եմ իմ զգացմունքներով ցույց տալ, որ «ուրախ» եմ: Հնարավո՞ր է, որ լինեն դեպքեր, երբ ես ուրախ լինեմ, բայց ուրախություն չզգամ: Եթե այո, ապա ե՞րբ, ինչպե՞ս:

զ. Անցկացրո՛ւ քո կամքով:

Օրինակ. Ես ուզո՞ւմ եմ երջանիկ լինել, երբ անցնում եմ դժվարությունների միջով:
Ինչպե՞ս կարող եմ ցույց տալ, որ ուրախ եմ:
Ե՞րբ պետք է ուրախ լինեմ (համարի մնացած մասը պատասխանում է հետևյալ հարցին. «...երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք»):

Երրորդ հարցին պատասխանելը քեզ կարող է տանել նրան, որ նորից անցնես վերը նշված քայլերով՝ բայց այս անգամ համարի մնացած մասը հաշվի առնելով. «...երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք»:

Օրինակ. Անցկացրո՛ւ այն քո մտքով:
Ի՞նչ է նշանակում «այլևայլ փորձություններ»:
Որո՞նք են այն փորձությունները, որոնցով ես անցնում եմ:
Ի՞նչ է նշանակում ուրախ լինել, երբ անցնում եմ այլևայլ փորձություններով:

է. Մտածելը միախառնի՛ր աղոթքի հետ:

Աղոթի՛ր ու խնդրի՛ր Սուրբ Հոգուն, որ քեզ ցույց տա այն համարի խորությունները, որի շուրջ դու մտածում ես: Խնդրի՛ր Սուրբ Հոգուն՝ քեզ մտքեր տալ, թե ինչպես կիրառես Նրա Խոսքը քո մտքերի, վերաբերմունքների, զգացմունքների և գործողությունների մեջ:

ը. Կրկնելու կարևորությունը:

Մտածելը մի բան է, որը դու նորից ու նորից կարող ես օգտագործել միևնույն համարի համար: Դու կարող ես, ըստ քո ցանկության, փորձել նույն համարի վրա մտածել մեկ շաբաթ շարունակ՝ օրը մեկ անգամ: Դու անակնկալի կգաս, երբ տեսնես, թե ինչպես է Աստված քեզ նոր բաներ սովորեցնում, անգամ երբ միևնույն համարի շուրջ ես մտածում: Իրականում դու կարող ես նաև նկատել, որ միևնույն հատվածի վրա վեց ամսվա ընթացքում քսան անգամ մտածելուց հետո էլ նոր բաներ ես բացահայտում: Աստծո Խոսքը շատ խորն է:

թ. Մտածելը գործածի՛ր Աստվածաշնչի ուսումնասիրության՝ քո օգտագործած այլ մեթոդների հետ միասին:

Այս դասընթացին մենք քննարկել ենք Աստվածաշնչի ուսումնասիրության տարբեր մեթոդներ: Աստվածաշնչի ուսումնասիրությունն ավարտելուց հետո ժամանակ հատկացրու՝ քո սովորածի շուրջ մտածելու համար: Մա կօգնի քեզ՝ ավելի խորը թափանցել Աստծո Խոսքի մեջ, իսկ Աստծո Խոսքը՝ քո սրտի մեջ:

Վերջին խոսք Աստվածաշնչի ուսումնասիրության վերաբերյալ:

Աստվածաշնչի ուսումնասիրությունը վերաբերում է անձնական կիրառությանը, որն ամբողջությամբ ուղղված է Աստծո Խոսքը սովորելուն, որպեսզի կարողանաս այն կիրառել քո կյանքում՝ դառնալու համար հաջողակ անձնավորություն՝ ըստ Աստծո ուզածի: **Եփեսացիներին 2.10-ն ասում է. «Որովհետև մենք Նրա ձեռքի գործն ենք, Քրիստոսով Հիսուսով բարի գործերի համար ստեղծված, որոնց Աստված նախապես պատրաստեց, որ նրանց մեջ քայլենք»:** Աստվածաշունչն ուսումնասիրելու ընթացքում մենք ավելի շատ կսովորենք «բարի գործերի» մասին, որոնք Աստված ուզում է, որ այսօր անենք:

Աստվածաշնչի քո ուսումնասիրությանն անպայման շատ աղո՛թք միախառնիր: Քո աղոթքի կյանքին բազմազանություն և խորություն հաղորդելու ձևերից մեկը քո ուսումնասիրած համարների հիման վրա Աստծուն աղոթելն է: Երբ քո հայացքն ուղղված է Հիսուսին, դու ավելի ու ավելի շատ ես սովորում, թե ինչպես դառնալ Աստծո ուզած անձնավորությունը:

Բ Կորնթացիներին 8:11

Այս համարը տարբեր թարգմանություններով կարդալիս ավելի լավ ես պատկերացնում, թե ինչպես տարբեր թարգմանություններ քեզ կարող են օգնել՝ լավագույնս ըմբռնելու՝ ինչի մասին է տվյալ համարը խոսում:

TBS թարգմանություն.

«Արդ, ավարտին հասցրեք սա, որպեսզի ինչպես հոժարությամբ սկսել եք, այնպես էլ ձեր ունեցածի չափով կատարեք»:

Արևելահայերեն թարգմանություն.

«Բայց արդ, աւարտի՛ն հասցրեք այն, որովհետեւ ինչպիսի յօժար կամքով որ սկսեցիք, կատարեցէ՛ք այն ձեր ունեցուածքի չափով»:

Արևմտահայերեն թարգմանություն.

«Ուստի հիմա ընելն ալ կատարեցեք, որպեսզի ինչպես կամքի յոժարութիւն կայ, նույնպես ալ ընելը ձեր ունեցածներուն չափովը ըլլայ»:

Անձնական կիրառության լավ նպատակի նշանները:

1. **Այն պարզ է:** Քո մտքում կասկածներ չի թողնում այն բանի վերաբերյալ, թե ինչ ես ուզում իրականացնել:
2. **Այն կոնկրետ է:** Հստակորեն ցույց է տալիս նպատակակետը: Հաճախ մեր նպատակները չափազանց ընդհանրական են: Օրինակ, հետևյալ նպատակը՝ «Ես ավելի կմոտենամ Աստծուն», չափից ավելի ընդհանրական է: Խելամիտ կլինե՞ր՝ դրա փոխարեն որոշել մեկ կոնկրետ բան, որը կարող էիր անել, և որը, քո համոզմունքով, քեզ ավելի կմոտեցնե՞ր Աստծուն: Դի՛ր այն որպես քո առաջին նպատակ: Երբ դա իրականանա, դի՛ր մեկ այլ նպատակ, որը կհաստատի առաջինը, նաև՝ ևս մեկ քայլով կգարգացնի Աստծո հետ քո փոխհարաբերությունը: Միշտ հստակ ու պարզ եղիր յուրաքանչյուր քո նպատակ շարադրելիս: Հեռո՛ւ պահիր դրանք խառնաշփոթությունից՝ կենտրոնացնելով մեկ կոնկրետ գործողության վրա:
3. **Այն իմաստալից է:** Վերաբերում է քո այսօրվա կյանքին: Այսպիսի նպատակը՝ «Եթե ես հարստանամ, ամեն կիրակի 50 դոլար կտամ իմ եկեղեցուն», այնքան էլ իմաստալից չէ, քանի որ դու դրա հետ կապված ոչինչ չես կարող անել հիմա: Երբ հարստանաս, այն ժամանակ նպատակնե՛ր դիր քո հարստության վերաբերյալ: Քո նպատակը պետք է բխի այն բանից, ինչի վերաբերմամբ դու վստահ ես, որ հնարավոր է քո կյանքում այսօր: Նաև այն պետք է բերի փոփոխություն, որը դու իրականում ուզում ես, որ տեղի ունենա:
4. **Այն գործնական է:** Կարո՞ղ ես դա ավարտել այսօր: Այսպիսի նպատակը՝ «Ամեն անգամ, երբ ես փորձության մեջ լինեմ, կգիտակցեմ, որ սատանան է ինձ փորձում», լավ է հնչում, սակայն արդյո՞ք այն գործնական է: Դու ունա՞կ ես ինքդ քեզ ասել, որ սատանան է քեզ փորձում՝ հենց այն ակնթարթին, երբ փորձության մեջ հայտնվես: Այս նպատակը հոգևոր է թվում, սակայն այն չափազանց դժվար կարող է լինել այն նորադարձ քրիստոնյայի համար, ով նոր է փորձում հաղթահարել փորձությունները:

Սկսի՛ր պարզ, կարճ նպատակներով, որոնք կարող ես մեկ օրում ավարտել: Օրինակ. «Այսօր ես կնշեմ այն բոլոր դեպքերը, երբ մեղքի փորձության մեջ եմ հայտնվել»: Դու այս նպատակն ավելի կոնկրետ կարող ես դարձնել՝ նշելով միայն մի տեսակի փորձություն: Օրինակ՝ «... երբ հայհոյելու փորձության մեջ հայտնվեմ»:

5. **Այն կարելի է չափել:** Կարո՞ղ ես չափել հետևյալ նպատակը՝ «Ես այսօր ավելի կմոտենամ Աստծուն»: Այս նպատակը գրված չէ այն ձևով, որ հնարավոր լինե՞ր չափել: Եթե ուզում ես վստահ լինել, որ առաջընթաց ես ունենում, պետք է նպատակդ այնպես շարադրես, որ կարողանաս հեշտությամբ չափել քո առաջընթացը: Այսպիսի նպատակը՝ «Այսօր ես կնշեմ այն բոլոր դեպքերը,

երբ փորձության մեջ եմ հայտնվել», չափելի է: Երբ դու գրում ես դրանք, ավարտում ես քո անելիքը, որը կարելի է չափել:

Ահա չորս հարցեր, որոնք դու կարող ես տալ՝ քո նպատակը գրելիս.

-- Ի՞նչն եմ չափելու:

-- Ի՞նչ միջոց եմ օգտագործելու չափելու համար:

-- Ինչպե՞ս կարող եմ հեշտությամբ չափել այն:

-- Ինչպե՞ս կարող եմ մեկ ուրիշը չափել իմ առաջընթացը:

6. **Այն օգնում է քեզ:** Անձնական կիրառության նպատակներ դնելու ողջ իմաստը քեզ օգնելն է՝ Աստծուն ավելի մոտենալու համար: Նախապես մտածի՛ր: Քո նպատակը գրելիս հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ինչպե՞ս է այս նպատակն ինձ օգնելու, որ աճեմ»: Երբ աշխատում ես յուրաքանչյուր նպատակի իրականացման ուղղությամբ, դու տեսնո՞ւմ ես, որ այն օգնում է քեզ՝ ավելի լավ քրիստոնյա դառնալու համար:

*Վերատպված է Ուսանողի ձեռնարկից *Սուրբ Գրքի համարներ անգիր անելու դասի* համար, որ *Անձնական ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* բաժնի մի մասն է: Օգտագործվում է թույլտվությամբ: